



Հաճախորդը բնակարանի ձեռքբերման նպատակով Բանկից ստացել է վարկ, ապա տեղեկացվել է, որ ձեռքբերված բնակարանը պետք է ապահովագրվի Բանկի կողմից ընտրված ապահովագրական ընկերությունում, որի ընտրության հետ կապված Հաճախորդը հայտնել է իր անհամաձայնությունը՝ խնդրելով ապահովագրությունը կատարել Բանկի ցանկում ընդգրկված մեկ այլ ապահովագրական ընկերությունում: Հաճախորդի խնդրանքը մնացել է անպատասխան, իսկ օրեր անց նա տեղեկացել է, որ Բանկն իր փոխարեն ապահովագրել է գրավադրված բնակարանը՝ Հաճախորդի հաշվից պահելով ապահովագրավճար: Արդյունքում Հաճախորդը կրել է վնաս, այդ թվում՝ տույժեր և տուգանքներ չապահովագրված օրերի համար:

Դիմելով Հաշտարարին՝ Հաճախորդը պահանջել է Բանկից փոխհատուցել իր մոտ առաջացած նյութական վնասը և հնարավորություն ընձեռել ապահովագրությունն իրականացնել Բանկի ցուցակից ընտրված մեկ այլ ապահովագրական ընկերությունում:

Հաշտարարը ծանոթացել է խնդրի վերաբերյալ Բանկի դիրքորոշմանը, որը հետևյալն էր. համաձայն կնքված պայմանագրի՝ Հաճախորդը պարտավորվել է ապահովագրել գրավադրված անշարժ գույք, ինչը սկզբնական շրջանում կատարվել է, սակայն հետագայում՝ ոչ, ուստի Բանկը մի շարք բանավոր և գրավոր հիշեցումներից հետո իր նախաձեռնությամբ և Հաճախորդի հաշվին իրականացրել է ապահովագրությունը: Երբ Բանկը Հաճախորդից ստացել է դիմում Բանկի գրավադրված անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականի և գնահատման ակտի պատճենները տրամադրելու վերաբերյալ, դիմումն ուղարկվել է Բանկի համապատասխան բաժին պատճենները տրամադրելու համար, իսկ ներքին քննությունից պարզվել է, որ պատճեններն ուղարկվել են համապատասխան մասնաճյուղ Հաճախորդին տրամադրելու նպատակով, սակայն Բանկը որևէ փաստաթուղթ չունի՝ արդյոք Հաճախորդը ստացել է պատճենները, թե՛ ոչ:

Բանկը, հաշվի առնելով այն հանգամանքը, որը Հաճախորդի՝ պատշաճ ծանուցված լինելու փաստի վերաբերյալ որևէ ապացույց չկա, ինչպես նաև նկատի ունենալով Հաճախորդի ցանկությունը (իր միջոցներով իր կողմից նախընտրելի և Բանկի կողմից ընդունելի ապահովագրական ընկերության միջոցով ապահովագրել գրավադրված անշարժ գույքը)՝ պատրաստակամություն է հայտնել չեղյալ համարել ապահովագրական ընկերության միջոցով ձևակերպված վերջին ապահովագրությունը՝ հնարավորություն ընձեռելով Հաճախորդին ապահովագրելու անշարժ գույքը Բանկի հետ համաձայնեցված և Հաճախորդի կողմից նախընտրելի ապահովագրական ընկերության միջոցով: Խնդրի լուծման Բանկի առաջարկված տարբերակին համաձայն լինելով՝ Հաճախորդը որոշել է հաշտության գալ նրա հետ:

Այսպիսով, Հաշտարարի միջնորդությամբ կողմերը եկել են համաձայնության՝ կնքելով հաշտության համաձայնագիր: